ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 07.12.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ 112/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Մաժէվ» ՍՊԸ-ի 18.11.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ՀՀ պաշտպանության նախարարության 02.02.2016թ. թիվ ԴՎԱ/3774 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Ընթացակարգի հրավերը, ինչպես նաև ԳԲԽ-112/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 05.12.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Մաժէվ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 18.11.2016թ. ներկայացրած բողոքով «Մաժէվ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով 21.10.2016թ. կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/90» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը 28.10.2016թ. ծանուցվել է, որ Ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով վերջինս ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, ուստի անհրաժեշտ է սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

31.10.2016թ. Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացրել է որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը (1-ին չափաբաժնի համար՝ «Սառը ուտեստների /խորտիկների/ պահպանման սառնարան-ցուցապահարան ПВВ(Н) 70КМ-С-НШ " АБАТ"», 3-րդ չափաբաժնի համար՝ «էլեկտրական մարմիդ՝ ЭМК-40Н "АБАТ"»)

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, նախ, 07.11.2016թ. ժամը 10:33-ին ծանուցել է Ընկերությանն այն մասին, որ առաջարկված 3-րդ չափաբաժնի՝ ճաշարաններում օգտագործվող սարքեր /էլեկտրական մարմիդ/ ապրանքատեսակի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափսերը չեն համապատասխանում հրավերով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափսերին:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին կետը և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 51-րդ կետը՝ Պատվիրատուն հայտնել է, որ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Համաձայն սահմանված կարգի Ընկերությունը տվյալ շտկումը կարող էր ուղարկել մինչև 08.11.2016թ. ժամը 18:00-ին:

Ի պատասխան 07.11.2016թ. ժամը 10:33-ն ստացված ծանուցման՝ Ընկերությունը 08.11.2016թ. սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացրել է համապատասխան շտկումը՝ ներկայացնելով 3-րդ չափաբաժնի համար իր կողմից առաջարկվող ապրանքատեսակի տեխնիկական բնութագրի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, ինչպես նաև գրություն արտադրող կազմակերպության կողմից այն մասին, որ տվյալ ապրանքի չափերն արտադրման օրվանից եղել են 401*828*474մմ և երբևիցե չեն փոփոխվել: Բացի այդ, Ընկերությունը նշել է, որ 07.11.2016թ. ժամը 18:29-ին Ընկերությանը ծանուցվել է, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված և վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են

անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված 1-ին չափաբաժնի՝ սառնարաններ (սառը ուտեստների /խորտիկների/ պահպանման սառնարան-ցուցապահարան) ապրանքատեսակի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափսերը պետք է լինեն +/-3% շեղումներով, սակայն հրավերով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափսերին շեղում չի նախատեսվում: Ընկերության կողմից առաջարկված 3-րդ չափաբաժնի՝ ճաշարաններում օգտագործվող սարքեր /էլեկտրական մարմիդ/ ապրանքատեսակի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափսերը չեն համապատասխանում հրավերով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափսերին:

Պատվիրատուն նույն ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը՝ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ըստ «Մաժէվ» ՍՊԸ-ի՝ կրկնակի ծանուցում ուղարկելով՝ փաստորեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մոլորության մեջ է գցել Ընկերությանը և խախտել է Կարգի 51-րդ կետը, ստեղծելով իրավիճակ, որ Ընկերությունը երկրորդ ծանուցման համար կարող է շտկում ներկայացնել մինչև 09.11.2016թ. ժամը 18:00-ն ներառյալ:

Ընկերությունը հայտնել է, որ տվյալ ծանուցումն ուղարկվել է 07.11.2016թ. ժամը 18:29-ին, երբ աշխատանքային օրն արդեն իսկ ավարտվել է, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համարվում է որպես 08.11.2016թ. ուղարկված, ուստի Ընկերությունը դրա վերաբերյալ կարող էր շտկում ներկայացնել մինչև 09.11.2016թ. ժամը 18:00-ին: Վերոգրյալից ելնելով 09.11.2016թ. Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացրել է համապատասխան շտկումը:

09.11.2016թ. ժամը 11:30-ին Ընկերության ներկայացուցիչը մասնակցել է գնահատող հանձնաժողովի նիստին և պատասխանել գնահատող հանձնաժողովի անդամների հարցադրումներին:

Սակայն 15.11.2016թ. ընդունած որոշմամբ գնահատող հանձնաժողովն անօրինականորեն չի քննարկել Ընկերության կողմից 09.11.2016թ. ներկայացրած

շտկումը, ցուցաբերել է հայեցողական դիրքորոշում, թույլ է տվել ընթացակարգի խախտումներ:

Ընկերության կողմից վկայակոչվել են բողոքի փաստացի և իրավական հետևյալ հիմքերը, ապացույցները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

2)չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Ընկերությունը նշել է, որ հրապարակված հրավերին կից պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել են տարօրինակ, անհասկանալի և տարընկալում առաջացնող չափանիշներ, որոնք խիստ էական նշանակություն ունեն տվյալ ապրանքների համար: Մասնավորապես, բոլոր երեք չափաբաժիններում «ջերմաստիճան» և (կամ) «ջերմաստիճանի կարգավորման» եզրույթներից հետո լրացվել են ըստ էության անհասկանալի նիշեր և տառատեսակ: Այն է՝ օրինակ 1-ին չափաբաժնում ներկայացված է «+1-ից-1$_0$C» եզրույթը, որը հետագայում հանձնաժողովի նիստերի ընթացքում պարզվեց, որ իրականում «+1-ից 10^{0}C» է, ինչն անվիճելի փաստ է, ուստի Ընկերությունն իր ներկայացրած բնութագրում նշել է «+1-ից

10^0C» և ճանաչվել է հաղթող այդ չափաբաժնով: Երկրորդ չափաբաժնով ներկայացված է եղել «20-ից -270^0C» եզրույթը, այսինքն շարժվելով նույն տրամաբանությամբ ստացվում է, որ Պատվիրատուն իրականում նկատի է ունեցել «20-ից -2700^0C», այսինքն, ավելին քան երկաթի հալման ջերմաստիճանը (1538,85^0C), իսկ 3-րդ չափաբաժնով նշելով «85^0C» եզրույթը՝ նկատի է ունեցել «850^0C»:

Ըստ Ընկերության՝ ակնհայտ է, որ Պատվիրատուն կոպտորեն խախտելով Օրենքի 5-րդ, 6-րդ և 12-րդ հոդվածների պահանջները, դիտավորությամբ կամ անզգուշությամբ շփոթության աստիճանի մոլորության մեջ է գցել նաև Ընկերությանը:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 21-ը դեկտեմբերի 2015թ. թիվ 914-Ա հրամանի՝ սահմանվել են գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով սահմանվել են լրացուցիչ 3 սյունյակ, ավելացնելով օրինակելի ձևից տարբերվող պահանջներ, ինչն իր հերթին խճճում և բարդացնում է Ընթացակարգին Ընկերության մասնակցությունը: Օրինակ, Պատվիրատուի կողմից լրացուցիչ պահանջվել է լրացնել չափման միավոր, քանակ և մեկ միավորի առաջարկված գինը թվերով և տառերով, ինչը լրացուցիչ հանգեցրել է լրացման սխալների:

Բացի այդ, գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության առաջարկը ոչ համարժեք գնահատելու հիմքերը՝ գաբարիտային չափսերը, ըստ Ընկերության, հիմնավոր չեն, դրանք չեն բխում գնման առարկայի նշանակությունից և օգտագործման բնույթից, քանի որ գնման առարկան նախատեսված չէ որևէ արկղում կամ նմանատիպ սահմանափակ վայրում տեղադրելու համար, որը կարող է սահմանափակել կամ իմաստազրկել գնման առարկայի օգտագործումն ըստ նշանակության: Միաժամանակ, հակասությունը միայն գնման առարկայի բարձրության մեջ է՝ 850մմ, քանի որ արտադրող կազմակերպությունն իր պաշտոնական կայքէջում ապրանքի անձնագրում նշել է, որ դրա լայնությունը 401մմ (իսկ էլեկտրոնային կատալոգում նշել է 400մմ, տարբերությունը 1մմ, որն ըստ էության նշանակություն չունի, հաշվի առնելով գնման ապրանքի նշանակությունը): Իսկ երկարությունը, ներառյալ ջուրը դատարկելու ծորակը, որը շահագործման ընթացքում նախատեսված չէ, որ մշտապես պետք է տեղադրված լինի՝ կազմում է 828մմ (առանց ծորակի ըստ էլեկտրոնային կատալոգի 750մմ):

Այսպիսով, չի համընկնում միայն բարձրության չափը: Բացի այդ, անհրաժեշտ է նշել նաև, որ ըստ Պատվիրատուի տեխնիկական բնութագրի 3-րդ չափաբաժնով սահմանված «Վաննայի մեջ լցվող ջրի ծավալը 4դմ^3» հասկացությունը նույնպես էական նշանակություն ունի սույն վեճի լուծման հարցում, քանի որ Ընկերության կողմից ըստ տեխնիկական բնութագրի ներկայացված գաբարիտային չափսերը՝ չնայած բարձրության չափսի կրկնակի տարբերությանը, նույնպես համընկնում են և հետևաբար տվյալ դեպքում առաջանում է հետևյալ օրինաչափությունն առ այն, որ՝

1. կամ վաննայի մեջ լցվող ջրի ծավալը պետք է լիներ մոտ 8դմ^3,
2. կամ տվյալ ապրանքը պետք է ունենար գործարանային տվյալներից դուրս լրացուցիչ երկար հենակներ (ոտքեր),
3. կամ պետք է ներառվեր նաև վերջինիս համար նախատեսված MH-02 տակդիրը:

«Մաժէվ» ՍՊԸ-ն հայտնել է, որ, եթե հիմք ընդունել 4դմ^3 ծավալը, վերոգրյալ 1-ին կետով սահմանված դեպքը բացառվում է: Ստացվում է, որ հնարավոր են միմիայն վերոգրյալ 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերը, որոնց պարագայում, թե տեխնիկական բնութագրում և, թե հրավերում որևէ անդրադարձ չի կատարվել, չափման միավորն էլ նշվել է ոչ թե հավաքածու, այլ՝ հատ:

Ընկերությունը նշել է, որ հրապարակված հրավերի գնման պայմանագրի թիվ 1 հավելվածի չափաբաժինների բնութագրերում թեև նշված են բազմաթիվ կոնկրետ չափեր, սակայն նկարագրված չէ, որն է բարձրությունը, լայնությունը, երկարությունը, ինչպես նաև գործարար շրջանառությունում թույլատրելի հնարավոր շեղումները: Այսինքն՝ նշելով կոնկրետ չափսեր և չկիրառելով թույլատրելի շեղումների համարժեք եզրույթները ստացվում է, որ Պատվիրատուն նկատի է ունեցել կոնկրետ մոդել և արհեստականորեն թաքցրել է վերջինիս անվանումը և մոդելը, ինչն իր հերթին չի բխում Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներից:

Հատկանշական է նաև, որ հրապարակված հրավերի գնման պայմանագրի թիվ 1 հավելվածի բոլոր չափաբաժինների գնման առարկաների տեխնիկական բնութագրերը, առանց թույլ տրված սխալների դիտարկման, բառացիորեն վերցված և թարգմանված են տվյալ ապրանքների կոնկրետ հետևյալ արտադրողի՝ ОАО "ЭЛИНОКС"-ի "АБАТ" ապրանքանիշի պաշտոնական կայք էջերից՝ www.abat.ru կամ www.elinox.ru: Եվ վերջինիցս բացի, այլ արտադրող կոնկրետ այդ տեխնիկական բնութագրերով

ուղղակիորեն գոյություն չունի: Այսպիսով, առաջանում է տրամաբանական հարց, թե ինչով է պայմանավորված, որ հանձնաժողովն իր կողմից թույլ տված սխալների մի մասն ընդունում է, իսկ մյուս մասը չի ընդունում:

Վերլուծելով վերոգրյալներն ակնհայտ է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված Ընթացակարգը կայացել է Օրենքի ակնհայտ և կոպիտ խախտումներով:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2016թ. կայացրած թիվ 3 որոշումը, դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2016թ. կայացրած թիվ 3 որոշումը, դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/90» ծածկագրով ընթացակարգը:

2. 2 <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 02.02.2016թ. թիվ ԴՎԱ/3774 գրությամբ «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ քանի որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/90» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա էին անհամապատասխանություններ ապրանքների գաբարիտային չափերում, ուստի մասնակցին նույն օրը ծանուցվել է շտկումներ կատարելու վերաբերյալ՝ նախ 3-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի գաբարիտային չափերի մասով, իսկ հետո նաև

1-ին չափաբաժնով ներկայացված ապրանքի գաբարիտային չափսերի շեղումներ չնախատեսելու վերաբերյալ (համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից 07.11.2016թ. թիվ 514/3282 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացության):

Ծանուցման հաջորդ աշխատանքային օրը՝ 08.11.2016թ. «Մաժէվ» ՍՊԸ ներկայացրել է շտկում 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով, որտեղ 1-ին չափաբաժնով անհամապատասխանությունը շտկել է, իսկ 3-րդ չափաբաժնի մասով գաբարիտային չափսերը թողել անփոփոխ: 09.11.2016թ. հրավիրված նիստում գնահատող հանձնաժողովը 1-ին չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագիրը համարել է համապատասխան, իսկ 3-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագիրը անհամապատասխան հրավերի պայմաններին: Տեղեկացնում եմ նաև, որ մասնակիցը 09.11.2016թ. նորից ներկայացրել է շտկում, որտեղ շտկել է նաև 3-րդ չափաբաժնի ապրանքի գաբարիտային չափսերը, սակայն հանձնաժողովի կողմից այդ շտկումը չի քննարկվել, շտկումների համար նախատեսված ժամկետը լրանալու պատճառով:

Ինչ վերաբերում է հրավերի գնման պայմանագրի նախագծի հավելված 1-ով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա անհասկանալի և տարընկալում առաջացնող չափանիշների, ապա, ըստ Պատվիրատուի, ընթացակարգին հայտ ներկայացրած երկու մասնակիցներն էլ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն իրավունք ունեին պահանջելու հրավերի պարզաբանում, ինչը սակայն մասնակիցների կողմից չի պահանջվել, ուստի ենթադրվում է, որ մասնակիցների համար հրավերում անհասկանալի կամ տարընկալում առաջացնող չափանիշներ չեն եղել:

<u>3. ԳԲԽ-112/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 05.12.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Մաժէվ» ՍՊԸ-ի 18.11.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2016թ. կայացրած թիվ 3 որոշումը դադարեցնելու մասին պահանջը մերժել, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և

կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/90» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու մասին պահանջը բավարարել:

4. ԳԲԽ-112/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-112/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/90» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մաժէվ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերին կից հավելված N 1 տեխնիկական բնութագիրը կազմվել է հետևյալ բովանդակությամբ՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
1	սառնարաններ /Սառը ուտեստների /խորտիկների/ պահպանման սառնարան-ցուցապահարան/	Սառը ուտեստների պահպանման համար նախատեսված սառնարան-ցուցապահարան, օգտագործվող նոմինալ հզորությունը 0,671Կվտ, լարումը 230Վ, ցուցափեղկի օգտակար ծավալը 0,5մ3, ցուցադրական դարսակի մակերեսը 1,55մ2, ցուցադրական վահանակի կամսեզանիկի մակերեսը 0,57մ2, ***ցուցափեղկի օդի օգտակար ծավալի ջերմաստիճանը +1-ից -1oC,*** հոսանքի մեկ օրվա ծախսը ոչ ավել 7 Կվտ, գազի տեսակը R 404 A, լուսավորության լամպերի քանակը 6 հատ, գաբարիտային չափսերը ***1120*705(1030)*1720*** մմ: Մատակարարվող ապրանքը պետք է լինի նախկինում չօգտագործված և ունենա երաշխիքային ժամկետ ոչ պակաս քան 1 տարի:
2	ճաշարաններում օգտագործվող սարքեր /Էլեկտրական պահարան տապակարան/	Էլեկտրական պահարան տապակարան, նախատեսված է հացաբուլկեղենի թխման համար, ինչպես նաև տապակման համար, օգտագործվող նոմինալ հզորությունը 10,4Կվտ, նոմինալ լարումը 400Վ, խցիկների քանակը 2 հատ, թխման տարածքի մակերեսը 1,46մ2, ջերմաստիճանի կարգավորման միջակայքը ***20-ից 270oC***, խցիկի տաքացման ժամանակը մինչև 240oC 40 րոպե, խցիկի գաբարիտային չափսերը 1000*800*180մմ, ***գաբարիտային չափսերը 1300*980*(1083)*1320մմ***: Մատակարարվող ապրանքը պետք է լինի նախկինում չօգտագործված և ունենա երաշխիքային ժամկետ ոչ պակաս, քան 1 տարի:

3	ճաշարաններում օգտագործվող սարքեր /էլեկտրական մարմիդ/	Նախատեսված է տաք վիճակում ապուրների, սոուսային ուտեստների և գարնիրների պահպանման, ինչպես նաև մատուցման համար: Օգտագործվող նոմինալ հզորությունը 0,75 ԿՎՏ, նոմինալ լարումը 230Վ: Աշխատանքային ջերմաստիճանին հասնելու ժամանակը ոչ ավել 25 րոպե: Վաննայի օդի աշխատանքային ջերմաստիճանը ***85oC***: Վաննայի մեջ լցվող ջրի ծավալը 4 դմ3: Տեների քանակը երեք հատ: Նոմինալ տարողությունը 21դմ3: ***Գաբարիտային չափսերը 400*750*850մմ:*** Մատակարարվող ապրանքը պետք է լինի նախկինում չօգտագործված և ունենա երաշխիքային ժամկետ ոչ պակաս քան 1 տարի:

3. Ընթացակարգի հրավերով N 4 հավելվածը՝ գնային առաջարկը պահանջվել է ներկայացնել հետևյալ ձևով.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	Քանակ	**Ինքնարժեք** (Մեկ միավորի գնի մասով)	**Շահույթ** (Մեկ միավորի գնի մասով)	**ԱԱՀ*** (Մեկ միավորի գնի մասով)	**Մեկ միավորի առաջարկված գինը** /տառերով և թվերով/	**Առաջարկված ընդհանուր /չափաբաժնի/ գինը** /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8=5+6+7*	*9=8X4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>							
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>							
3								

4. «Մաժէվ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածը՝ գնային առաջարկը ներկայացրել է հետևյալ տեսքով՝

(ՀՀ դրամ)

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քա-նակ	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Մեկ միավորի առաջարկված գինը (տառերով և թվերով)	Առաջարկված ընդհանուր չափաբաժնի գինը (տառերով և թվերով)
1	2	3	4	5	6	7	8=5+6+7	9=8X4
2	Ճաշարաններում օգտագործվող սարքեր (էլեկտրական պահարան տապակարան)	հատ	1	670 000	70 000	148 000	888 000	888 000 ***(ութ հարյուր ութսուն հազար)***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 27.10.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշվել է՝

- 2.3 կետով՝ մերժել «Մաժէվ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով, քանի որ վերջինիս կողմից 2-րդ չափաբաժնով ներկայացրած գնային առաջարկում ինքնարժեքի,

շահույթի և ԱԱՀ-ի ընդհանրական բաղադրիչների գումարը չի համապատասխանում տառերով գրված ընդհանուր գնին:

- 4.1 կետով՝ Ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մաժէվ» ՍՊԸ-ին:
- 4.2 կետով՝ հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

6. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մաժէվ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար նախատեսված գնման առարկայի համար ներկայացրած հայտի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանել է՝ ***գաբարիտային չափերը 1120*705*(1030)*1720մմ (շեղումները +/-3%):***

7. Ընկերությունն Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար նախատեսված գնման առարկայի համար ներկայացրած հայտի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանել է՝ ***գաբարիտային չափերը 401*828*474մմ (շեղումները +/-3%):***

8. Ընթացակարգի հանձնաժողովի գնահատող անդամի կողմից 07.11.2016թ. տրամադրվել է Ընթացակարգի հանձնաժողովի նախագահին մասնագիտական եզրակացություն, համաձայն որի՝ «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված 1-ին և 3-րդ չափաբաժինները չեն համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին, մասնավորապես, 1-ին չափաբաժնով նախատեսված նախատեսված ապրանքի գաբարիտային չափերը նշվել են +/-3% շեղումով, իսկ 3-րդ չափաբաժնով գնման առարկայի գաբարիտային չափերը նշվել են 401*828*474մմ, մինչդեռ պետք է նշվեր՝ 400*750*850մմ:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***07.11.2016թ. ժամը 10:33-ին ծանուցել է*** Ընկերությանը՝ հայտնելով, որ «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես, ***3-րդ չափաբաժնով*** պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափերը չեն համապատասխանում հրավերով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափերին: Հիմք ընդունելով Կարգի

51-րդ կետը՝ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***07.11.2016թ. ժամը 18:29-ին կրկին ծանուցել է*** Ընկերությանը՝ հայտնելով, որ «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես, ***1-ին չափաբաժնով*** նախատեսված ապրանքատեսակի համար տեխնիկական բնութագրում նշվել է, որ գաբարիտային չափսերը պետք է լինեն ***+/-3% շեղումներով,*** սակայն հրավերով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափսերին շեղում չի նախատեսվում, իսկ 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափսերը չեն համապատասխանում հրավերով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափսերին: Հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետն՝ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

11. Ընկերությունն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված ***08.11.2016թ.*** գրությամբ ներկայացրել է Ընթացակարգի հրավերի ***1-ին և 3-րդ*** չափաբաժիններով առաջարկվող ապրանքների անվանումները և դրանց տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները:

12. «Մաժէվ» ՍՊԸ-ն ***09.11.2016թ.*** կրկին ուղարկել է ***3-րդ չափաբաժնի*** ապրանքի շտկված տեխնիկական բնութագիրը հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

13. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.11.2016թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1.1 կետով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ***սահմանված ժամկետում՝ մեկ աշխատանքային օրում*** «Մաժէվ» ՍՊԸ-ն շտկել է 1-ին չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը, իսկ 3-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագիրը թողել է անփոփոխ, ուստի հիմք ընդունել մասնակցի ներկայացրած շտկումը, որոշել է՝ 1-ին չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը համարել համապատասխան հրավերով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրին, իսկ 3-րդ չափաբաժնի մասով հայտը մերժել:

14. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2016թ. թիվ 3 որոշմամբ՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ «Մաժէվ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է որպես ընտրված մասնակից:

15. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-112/16 բողոքը քննող հանձնաժողովի, 24.11.2016թ. կայացրած որոշմամբ բավարարել է «Մաժէվ» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը քննելով «Մաժէվ» ՍՊԸ-ի 18.11.2016թ. ներկայացրած բողոքը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

2)չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

Կարգի 44-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են ***հրավերի***

պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ *հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը* հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ա. Ընկերությունն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով՝ գնային առաջարկով առաջարկել է պայմանագիրը կատարել՝ նշելով գինը թվերով՝ ***888 000 ՀՀ դրամ***, տառերով՝ ***ութ հարյուր <u>ութսուն</u> հազար:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 27.10.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետով որոշվել է՝ մերժել «Մաժէվ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով, քանի որ վերջինիս կողմից 2-րդ չափաբաժնով ներկայացրած գնային առաջարկում ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի ընդհանրական բաղադրիչների գումարը չի համապատասխանել տառերով գրված ընդհանուր գնին:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ Ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով սահմանվել են լրացուցիչ 3 սյունյակ՝ ավելացնելով օրինակելի ձևից տարբերվող պահանջներ, ինչն իր հերթին խճճում և բարդացնում է Ընթացակարգին Ընկերության մասնակցությունը (օրինակ, Պատվիրատուի կողմից լրացուցիչ պահանջվում է լրացնել չափման միավոր, քանակ և մեկ միավորի առաջարկված գինը թվերով և տառերով, ինչը լրացուցիչ հանգեցրել է լրացման սխալների), ապա այս կապակցությամբ Խորհուրդը հայտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. ***«Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին»*** թիվ 667-Ա հրամանի 2-րդ կետով սահմանվել է, որ նույն հրամանի 1-ին կետի ենթակետերով հաստատվող փաստաթղթերի կիրառման ժամանակ պատվիրատուների կողմից դրանցում ***կարող են կատարվել փոփոխություններ***, որոնք չեն կարող հակասել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված նպատակներին և սկզբունքներին:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ այս մասով Պատվիրատուն չի խախտել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

բ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 27.10.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշվել է՝ Ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Մաժէվ» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

«Մաժէվ» ՍՊԸ-ն ներկայացրած հայտի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով 1-ին չափաբաժնի համար նախատեսված գնման առարկայի համար ***գաբարիտային չափսերը*** սահմանել է՝ ***1120*705*(1030)*1720մմ (շեղումները +/-3%),*** իսկ 3-րդ չափաբաժնի համար նախատեսված գնման առարկայի համար ***գաբարիտային չափսերը*** սահմանել է՝ ***401*828*474մմ (շեղումները +/-3%):***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***07.11.2016թ. ժամը 10:33-ին ծանուցել է*** Ընկերությանը՝ հայտնելով, որ «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես, 3-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափերը՝ **401*828*474մմ,** չեն համապատասխանում հրավերով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափերին՝ 400*750*850մմ-ին:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***07.11.2016թ. ժամը 18:29-ին կրկին ծանուցել է*** Ընկերությանը՝ հայտնելով, որ «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքատեսակի համար տեխնիկական բնութագրում նշվել է, որ գաբարիտային չափերը պետք է լինեն ***+/-3% շեղումներով,*** սակայն հրավերով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված գաբարիտային չափերին շեղում չի նախատեսվում:

Ընկերությունն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված ***08.11.2016թ.*** գրությամբ հայտնել է, որ ներկայացնում է Ընթացակարգի հրավերի ***1-ին և 3-րդ չափաբաժիններով*** առաջարկվող ապրանքների անվանումները և դրանց տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները, սակայն միայն շտկել է 1-ին չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը, իսկ 3-րդ չափաբաժնի մասով ապրանքի տեխնիկական բնութագիրը թողել է անփոփոխ, միաժամանակ ներկայացնելով արտադրող կազմակերպության՝ ОАО "ЭЛИНОКС"-ի "АБАТ" ապրանքանիշի պաշտոնական կայքի հասցեն՝ www.abat.ru կամ www.elinox.ru և 08.11.2016թ. ստացված թիվ 96-ЭОМ պաշտոնական գրության պատճենը, ըստ որի՝ վերջինիս կողմից արտադրվող ЭМК-40Н "АБАТ" ապրանքանիշի էլեկտրոնային մարմիտի չափերն արտադրման օրվանից եղել են ***401*828*474մմ***, և երբևիցե չեն փոփոխվել:

09.11.2016թ. «Մաժէվ» ՍՊԸ-ն Ընթացակարգի ***3-րդ չափաբաժնի*** ապրանքի շտկված տեխնիկական բնութագիրը կրկին ուղարկել է Պատվիրատուին, որն, ըստ Պատվիրատուի, համապատասխանեցրել է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.11.2016թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1.1 կետով որոշել է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ***սահմանված ժամկետում՝ մեկ աշխատանքային օրում (08.11.2016թ.)*** «Մաժէվ» ՍՊԸ-ն շտկել է 1-ին չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը, իսկ 3-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագիրը թողել է անփոփոխ, ուստի հիմք ընդունելով մասնակցի ներկայացրած շտկումը, որոշել է՝ 1-ին չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը համարել համապատասխան հրավերով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրին, իսկ 3-րդ չափաբաժնի մասով հայտը մերժել:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պատճառաբանությանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կրկնակի ծանուցում ուղարկելով, մոլորության մեջ է գցել Ընկերությանը և խախտել է Կարգի 51-րդ կետը, ստեղծելով իրավիճակ, որ Ընկերությունը երկրորդ ծանուցման համար կարող է շտկում ներկայացնել մինչև 09.11.2016թ. ժամը 18:00-ն, ապա այս կապակցությամբ Խորհուրդը հայտնում է, որ Ընկերությունը ***1-ին և 3-րդ չափաբաժինների մասով*** շտկված փաստաթղթերն արդեն իսկ ներկայացրել է ***08.11.2016թ.:*** Բացի այդ, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 07.11.2016թ. ժամը 10:33-ին փաստաթուղթը շտկելու վերաբերյալ ծանուցումը վերաբերել է կոնկրետ 3-րդ չափաբաժնով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրին, որն էլ Ընկերության կողմից չշտկվելու արդյունքում, Ընկերության հայտը տվյալ չափաբաժնի մասով մերժվել է:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում Պատվիրատուի կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

գ. Խորհուրդն, ուսումնասիրելով Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերը, հանգել է հետևյալ եզրակացության.

- Ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսվել է, որ ցուցափեղկի օդի օգտակար ծավալի ջերմաստիճանը պետք է լինի ***+1-ից -1oC,*** 2-րդ չափաբաժնով՝ ջերմաստիճանի կարգավորման միջակայքը պետք է լինի ***20-ից 270oC***, իսկ խցիկի

տաքացման ժամանակը մինչև ***240oC,*** 3-րդ չափաբաժնով՝ վաննայի օդի աշխատանքային ջերմաստիճանը պետք է լինի ***85oC***:

Ուսումնասիրելով ապրանքների շարադրված հատկանիշները՝ Խորհուրդը գտնում է, որ նշված տեխնիկական բնութագրերով սահմանվել են անհասկանալի և տարընկալում առաջացնող չափանիշներ: Մասնավորապես, բոլոր երեք չափաբաժիններում «ջերմաստիճան» և (կամ) «ջերմաստիճանի կարգավորման» եզրույթներից հետո լրացվել են, ըստ էության, անհասկանալի նիշեր և տառատեսակ: Օրինակ՝ 1-ին չափաբաժնում ներկայացված է «+1-ից-1_0C» եզրույթը, սակայն պարզվել է, որ Պատվիրատուն իրականում նկատի է ունեցել «+1-ից 10^0C» է, ուստի Ընկերությունն, իր ներկայացրած բնութագրում նշելով «+1-ից 10^0C», ճանաչվել է հաղթող այդ չափաբաժնով: Նույնը վերաբերում է 2-րդ և 3-րդ չափաբաժիններով սահմանված տարընկալման տեղիք տվող 20-ից 270oC, 240oC, 85oC եզրույթներին:

- Ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսվել են հետևյալ գաբարիտային չափսերը՝ ***1120*705(1030)*1720*** մմ, 2-րդ չափաբաժնով՝ ***1300*980*(1083)*1320մմ,*** 3-րդ չափաբաժնով՝ ***400*750*850մմ***:

Ուսումնասիրելով ապրանքների շարադրված հատկանիշները՝ Խորհուրդը գտնում է, որ նշված գաբարիտային չափսերն օբյեկտիվորեն հիմնավորված չեն և հանգեցրել են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, ինչի արդյունքում անհիմն կերպով բարդացվել և սահմանափակվել է հնարավոր մասնակիցների մասնակցության իրավունքը գնման գործընթացին: Ավելին, Պատվիրատուի կողմից նշված բողոքի քննության շրջանակներում այդպես էլ չներկայացվեց հիմնավորում առ այն, որ ապրանքների նշված գաբարիտային չափսերը համարժեք են Պատվիրատուի կարիքին և օբյեկտիվորեն հիմնավորված են (օրինակ, առարկան նախատեսված է որևէ արկղում կամ նմանատիպ սահմանափակ վայրում տեղադրելու համար):

Հաշվի առնելով վերոշարադրածը՝ Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկաների բնութագրերը չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին, ուստի «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից այս հարցի կապակցությամբ ներկայացրած առարկությունները հիմնավոր են և այս մասով բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մաժէվ» ՍՊԸ-ի 18.11.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

1. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2016թ. կայացրած թիվ 3 որոշումը դադարեցնելու մասին պահանջը մերժել:

2. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/90» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Գրիգորյան Գոռ**

Անդամներ՝ **Մնացականյան Հասմիկ**

Զոհրաբյան Տաթևիկ